ՆՈՐԱՑԱՑՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԺԷ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԷՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ[1]

Օգոստինոս Բաջենց (1584-1653)

Մ. Կարապետեան

Ժէ դարի առաջին կէսի հայ նշանաւոր գործիչներից, Նախիջեւանի հայ կաթողիկէ թէմի առաջնորդ Օգոստինոս Բաջենցի կենսագրութիւնն ու գործունէութիւնը, արդէն կարելի է ասել, մենագրօրէն ուսումնասիրուած է բաւական մանրամասն[2]*:*

Օգոստինոս Բաջենցի մատենագիտական ժառանգութիւնից մեզ է հասել նրա ուղեգրութիւն-ուխտագնացութիւնը[3]*, որը ունեցել է մի շարք հրատարակութիւններ ու թարգմանութիւններ*[4]*: Առայսօր ոչինչ*

---

1. Այս յօդուածի վերաբերեալ նիւթերին ծանօթացել ենք INTAS ծրագրի շրջանակներում 1996 թ. Ֆրանսիայի ու ապա յետագայում՝ Հռոմի դիւանների մեր ուսումնասիրութիւնների ժամանակ:

2. Նշելի են եւրոպական ուսումնասիրողներից Կարլոս Ալոնսոյի (Carlos Alonso. O.S.A. Angel Maria Cittadini, O.P., arzobispo de Naxivan ((1629), Una iniciativa de Propaganda Fide en favor de Armenia Roma, 1970 (Studia ephemeridis «Augustinianum», 6), Ամբրոսիոս Էսցերի (Ambrosius Eszer. Ôgostinos Bajenc O.P. als Oberhirte von Naxijewan,- AFP, vol. XLVII, Roma, 1977, S. 183-246) եւ Կարլո Լոնգոյի (Carlo Longo. Relazioni d'Armenia (1583-1640),- AFP, vol. LXVII, Roma, 1997, pp. 173-226) աշխատութիւնները, ուր շրջանառութեան մէջ է դրուած հսկայական փաստական նիւթ Բաջենցի կեանքի ու գործունէութեան վերաբերեալ: Հայագիտական գրականութեան մէջ Բաջենցի կենսագրութիւնը ամենայն մանրամասնութեամբ ուսումնասիրուել է հ. Սահակ Ճեմճեմեանի կողմից (տե՛ս նրա Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հռոմը, Վենետիկ, 2000):

3. Ֆրանսիայի Ազգային գրադարանում (Փարիզ) պահուող այս ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս R. H. Kévorkian, A. Ter-Stépanian. Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, Paris, 1998, pp. 13-17

4. Տե՛ս M. F. Brosset. Itinéraire du très-révérend Augustin Badjétsi, - «Journal asiatique», 3eme série, T. III, Paris, 1837, pp. 209-245, 401-417; Ք. Պ[ատկանեան] Նշխարք մատենագրութեան հայոց, ՍՊԲ, 1884, էջ 5-23; Վարք Աւգուստինոս Բաջենց հայալատին եպիսկոպոսին (հրատ. Կ. Բասմաջեան). - «Բանասէր», 1899, էջ 218-237, Ա. Մադոյեան. Օգոստինոս Բաջեցու ուղեգրութիւնը, - «Արաքս», 1996, 2, Երեւան, էջ 63-78; Նոյնի թարգմանութիւնը նաեւ «Ոսկեփորիկ». Երեւան, 1997, էջ 259-270: